# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

10.09.2003թ. ժ. 11.$^{00}$

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան *(Խորհրդի նախագահ),* Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան, Վ. Դանիելյան *(Խորհրդի անդամներ),* Ա. Աղազարյան *(Խորհրդի քարտուղար)*

**Հրավիրված էին՝** Լ. Միրզոյան *(ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ),* Գ. Գյուրջյան *(Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ),* Վ. Սարոյան *(Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ),* Ա. Կարապետյան *(Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ),* Գ. Թորոսյան *(Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ)*

**Օրակարգի նախագծում** ՝ երկու հարց.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից հավաքագրվող

- «Օդային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև թիվ 1-ԱՎԻԱ (ամսական),
- «Չարտերային չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև թիվ 1- ՉԱՐՏԵՐ (եռամսյակային),
- «Ըստ նշանակված օդանավակայաններ ուղևորների, փոստի, բեռների, ուղեբեռների առաքման և ժամանման մասին» Ձև թիվ 11- ՔԱ (եռամսյակային),
- «Կանոնավոր չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև թիվ 12- ՔԱ (եռամսյակային),
- «Ինքնաթիռների, ուղղաթիռների չվերթների չվացուցակի կատարման մասին» Ձև թիվ 30-ՔԱ (ամսական),
- «Ինքնաթիռների, ուղղաթիռների օրացուցային ժամանակի մասին» Ձև թիվ 34- ՔԱ (տարեկան),
- «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի հայաստանյան շարժակազմի արտադրանքի մասին» Ձև թիվ 65- ԱՎԻԱ (եռամսյակային),
- «Օդային տրանսպորտի բեռնափոխադրումների աշխատանքի մասին» Ձև թիվ 2- ԱՎԻԱ (ամսական),
- «Ուղևորների վերգետնյա սպասարկման մասին» Ձև թիվ 3- ԱՎԻԱ (ամսական),
- «Ինքնաթիռների, ուղղաթիռների չվերթների կատարման մասին (Անկախ ինքնաթիռների, ուղղաթիռների պատկանելիությունից) Ձև թիվ 4- ԱՎԻԱ (ամսական),
- «Օդային տրանսպորտի ուղևորների ելքի պետական տուրքի վճարումը հաստատող անդորրագրերի, արտոնության հավաստագրերի մասին» Ձև թիվ 5- ԱՎԻԱ (ամսական),

վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին և «Օդային տրանսպորտի աշխատանքի վերաբերյալ վարչական վիճակագրական հաշվետվությունների լրացման հրահանգին» հավանություն տալու մասին.
*/Զեկուցող՝ Գ. Թորոսյան/*

2. Այլ հարցեր
2.1 ՀՀ քաղաքացի Կ. Պողոսյանին Գերմանիայի Բրեմեն քաղաքի համալսարանում «ՀՀ տնային տնտեսությունների սպառողական վարքագծի վիճակագրական վերլուծություն և մոդելավորում» թեմայով գիտահետազոտական աշխատանք կատարելու համար ՀՀ ԱՎԾ -ի կողմից 2001 թվականին իրականացված տնային տնտեսությունների հետազոտության

արդյունքում ձևավորված յուրաքանչյուր տնային տնտեսության գծով սպառողական ծախսերի վերաբերյալ անվանազերծված տվյալների բազան տրամադրելու թույլտվության մասին.
*/Զեկուցող՝ Հ. Պետրոսյան/*

Նախագահի կողմից ներկայացվեց Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**
1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից հավաքագրվող
- «Օդային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև թիվ 1-ԱՎԻԱ (ամսական),
- «Չարտերային չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև թիվ 1- ՉԱՐՏԵՐ (եռամսյակային),
- «Ըստ նշանակված օդանավակայաններ ուղևորների, փոստի, բեռների, ուղեբեռների առաքման և ժամանման մասին» Ձև թիվ 11- ՔԱ (եռամսյակային),
- «Կանոնավոր չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև թիվ 12- ՔԱ (եռամսյակային),
- «Ինքնաթիռների, ուղղաթիռների չվերթների չվացուցակի կատարման մասին» Ձև թիվ 30-ՔԱ (ամսական),
- «Ինքնաթիռների, ուղղաթիռների օրացուցային ժամանակի մասին» Ձև թիվ 34- ՔԱ (տարեկան),
- «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի հայաստանյան շարժակազմի արտադրանքի մասին» Ձև թիվ 65- ԱՎԻԱ (եռամսյակային),
- «Օդային տրանսպորտի բեռնափոխադրումների աշխատանքի մասին» Ձև թիվ 2- ԱՎԻԱ (ամսական),
- «Ուղևորների վերգետնյա սպասարկման մասին» Ձև թիվ 3- ԱՎԻԱ (ամսական),
- «Ինքնաթիռների, ուղղաթիռների չվերթների կատարման մասին (Անկախ ինքնաթիռների, ուղղաթիռների պատկանելիությունից) Ձև թիվ 4- ԱՎԻԱ (ամսական),
- «Օդային տրանսպորտի ուղևորների ելքի պետական տուրքի վճարումը հաստատող անդորրագրերի, արտոնության հավաստագրերի մասին» Ձև թիվ 5- ԱՎԻԱ (ամսական),

վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին և «Օդային տրանսպորտի աշխատանքի վերաբերյալ վարչական վիճակագրական հաշվետվությունների լրացման հրահանգին» հավանություն տալու մասին.
*/Զեկուցող՝ Գ. Թորոսյան/*

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից հավաքագրվող
- «Օդային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև թիվ 1-ԱՎԻԱ (ամսական),
- «Չարտերային չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև թիվ 1- ՉԱՐՏԵՐ (եռամսյակային),
- «Ըստ նշանակված օդանավակայաններ ուղևորների, փոստի, բեռների, ուղեբեռների առաքման և ժամանման մասին» Ձև թիվ 11- ՔԱ (եռամսյակային),
- «Կանոնավոր չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» Ձև թիվ 12- ՔԱ (եռամսյակային),
- «Ինքնաթիռների, ուղղաթիռների չվերթների չվացուցակի կատարման մասին» Ձև թիվ 30-ՔԱ (ամսական),

- «Ինքնաթիռների, ուղղաթիռների օրացուցային ժամանակի մասին» Ձև թիվ 34- ՔԱ (տարեկան),

- «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի հայաստանյան շարժակազմի արտադրանքի մասին» Ձև թիվ 65- ԱՎԻԱ (եռամսյակային),

- «Օդային տրանսպորտի բեռնափոխադրումների աշխատանքի մասին» Ձև թիվ 2- ԱՎԻԱ (ամսական),

- «Ուղևորների վերգետնյա սպասարկման մասին» Ձև թիվ 3- ԱՎԻԱ (ամսական),

- «Ինքնաթիռների, ուղղաթիռների չվերթների կատարման մասին (Անկախ ինքնաթիռների, ուղղաթիռների պատկանելիությունից) Ձև թիվ 4- ԱՎԻԱ (ամսական),

- «Օդային տրանսպորտի ուղևորների ելքի պետական տուրքի վճարումը հաստատող անդորրագրերի, արտոնության հավաստագրերի մասին» Ձև թիվ 5- ԱՎԻԱ (ամսական), վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին և «Օդային տրանսպորտի աշխատանքի վերաբերյալ վարչական վիճակագրական հաշվետվությունների լրացման հրահանգին»

*/Արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. Այլ հարցեր

2.1 ՀՀ քաղաքացի Կ. Պողոսյանին Գերմանիայի Բրեմեն քաղաքի համալսարանում «ՀՀ տնային տնտեսությունների սպառողական վարքագծի վիճակագրական վերլուծություն և մոդելավորում» թեմայով գիտահետազոտական աշխատանք կատարելու համար ՀՀ ԱՎԾ -ի կողմից 2001 թվականին իրականացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքում ձևավորված յուրաքանչյուր տնային տնտեսության գծով սպառողական ծախսերի վերաբերյալ անվանազերծված տվյալների բազան տրամադրելու թույլտվության մասին.

*/Զեկուցող՝ Հ. Պետրոսյան/*

*Նշվեց, որ ՀՀ քաղաքացի Կ. Պողոսյանը 2002թ. մասնակցել է Գերմանիայի կառավարության կողմից ֆինանսավորվող DAAD կազմակերպության հայտարարած գիտահետազոտական աշխատանքնեևրի իրականացման դրամաշնորհային ծրագրի մրցույթին, ճանաչվել է հաղթող և ստացել դրամաշնորհ ս.թ. սեպտեմբերի 22-ից դեկտեմբերի 22ը Գերմանիայի Բրեմեն քաղաքի համալսարանում «ՀՀ տնային տնտեսությունների սպառողական վարքագծի վիճակագրական վերլուծություն և մոդելավորում» թեմայով հետազոտական աշխատանք իրականացնելու համար: Հետազոտական աշխատանքում առաջ քաշված խնդիրների արդյունավետ լուծման համար Կ. Պողոսյանը դիմել է ՀՀ ՎՊԽ հնարավորության սահմաններում ՀՀ ԱՎԾ -ի կողմից 2001 թվականին իրականացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքում ձևավորված յուրաքանչյուր տնային տնտեսության գծով սպառողական ծախսերի վերաբերյալ անվանազերծված տվյալների բազան տրամադրելու խնդրանքով: Միաժամանակ, Կ. Պողոսյանը պարտավորվում է ՀՀ ԱՎԾ կողմից իրեն տրամադրված տվյալների բազան օգտագործել զուտ վերոնշյալ հետազոտական աշխատանքների իրականացման համար, չփոխանցել այն այլ անձանց, չվաճառել, չհրապարակել և չտարածել: Վերոնշյալ պարտավորությունները արձանագրված են Կ. Պողոսյանի ներկայացրած դիմումում:*

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին տրամադրելու ՀՀ քաղաքացի Կարեն Պողոսյանին Գերմանիայի Բրեմեն քաղաքի համալսարանում «ՀՀ տնային տնտեսությունների սպառողական վարքագծի վիճակագրական վերլուծություն և մոդելավորում» թեմայով գիտահետազոտական աշխատանք կատարելու համար ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2001 թվականին իրականացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքում ձևավորված յուրաքանչյուր տնային տնտեսության գծով սպառողական ծախսերի

վերաբերյալ անվանազերծված տվյալների բազան հետևյալ՝ տրամադրվող անվանազերծված տեղեկատվությունը զուտ վերոնշյալ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

| | |
|---|---|
| Նախագահ | Ս. Մնացականյան |
| Քարտուղար | Ա. Աղազարյան |